

քին: 6 Վաղվաղակի զծեռն ի գործ արկեալ՝ տայր հրաման հարթել զբարձրաբերձ զբլուրսն, որ ի Ներքս¹ ի կղզւոջն էին, եւ շինեալ քաղաք մեծապայծառ, զոր ըստ իւրում անուանակոչութեանն Կոստանդնուպալիս² անուաներ, որ թարգմանի հայերէն՝ Կոստանդիանոսի քաղաք. զոր ոմանք ըստ հռովմայեցի³ բարբառոյն⁴ Պաղատն⁵ ասեն, որ թարգմանի⁶ արբունի: 7 Իսկ որ յառաջագոյն շինեալ Բիւզանդիոսն էր՝ է⁷ թաղ մի յեզեր Նորին քաղաքի, որ մինչեւ ցայսար Նորին անուամբ կոչի Բիւզանդիոս: 8 Եւ յայնմիտեւ վտակք գիտութեան, որպէս ի թագաւորանիստ վայրի, յորդեալ բղխեն ի քաղաքէն. որպէս եւ յամենայն կողմանց յաշխարհէն Յունաց քաջ ուսեալքն անդ փութեան հանդիսանալ, եւ մինչեւ ցայսար առաւելեալ տարածին յամենայն կողմանս Նորա իմաստութեան վտակք:

9 Արդ յայնպիսումն քաղաքի եւ ի մեջ այնչափ բազմութեանն ուսելոյ վարժեալ այրն Փաւստոս⁸ այնպիսի ինչ արդեալք անհաճոյս լսողաց բանս կարգէ՞ր ի պատմութեան իւրում: 10 Զա՛ւ եւ մի՛ լիցի: 11 Ուստի եւ անհաւատալի իմում տկարամտութեանս կարծեցեալ գործն՝ ասեմ, թէ գուցէ այլ ոք յանդուգն⁹ եւ անհրահանգ բանիւ լրբաբար ձեռն արկեալ յիւրն՝ գրեաց զինչ պետս ըստ կամի. եւ կամ զի ուրուք անկարեալ¹⁰ դիպողս՝ այլաբանեալ¹¹ վնասեաց, եւ անուամբ Փաւստոսին¹² զիւրոյ յանդգնութեանն սխալանս¹³ համարեցաւ ծածկել. եւ այն յայտնի ցուցանի ամենայն հայեցողաց¹⁴. քանզի են ոմանք¹⁵ ի Յոյնս, այլ մանաւանդ առաւել յԱսորիս, բազումք սպրդեցին գալ յայսպիսի յայրատութիւնս. արք տգետք եւ յանդգունք գրեցին յինքեանց ճառս ընդունայնս եւ անպիտանաբանս եւ խառնեալ եղին ի գիրս գիտուն լսողաց. այլ ընտրող¹⁶ մտաց ճանաչի յայտնապէս գիտնոցն¹⁷ բանք եւ անմտացն շաղկապութիւնք:

1 Ձ. որ ի Ներս. ԱԲտ. որք ի Ներս. Գտ. որք ի Ներքս

2 Ձ. կոստանդիանուպոլիս

3 Ատ. հռովմայեցի

4 Ձ. բարբառովն

5 Գտ. պալատն

6 Ձ. թարգմանի

7 ՏՏ. չիք է

8 Ատ. Փոստոս

9 Ձ. յանդուգն

10 Ձ. եւ կամ զուրուքն նկարեալ. Գտ. անկարացեալ

11 Ձ. այլաբանեալս

12 ՁԱտ. փոստոսին

13 Ձ. սղխալանս

14 ՁԱտ. հայցողաց

15 Ձ. քանզի եւ ոմանք

16 Ձ. ընդրող. Ատ. ընտրող

17 Ձ. գիտնոյն